91
P - 73

Հ.4 / 8.174 91 / Թ-73 22
Հեռախում է. գրատար հայ ուսանողների օգտին

ՄԱՍԻՍ ԼԵՌՆԵՐԻ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍՏՈՐՈՏԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՌՏԱՐԱՆՈՅ ԱՊՐԻԼ 21 ԻՆ ԱՐԾՐՈՒՆ ՈՒ
ԹԱՏՐՈՆԱՒՄ

Հ 3
16981

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
1882

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 Թ.

Доз. цензурою. Тиф. 6-го Августа, 1882 года.

16900

1952 г.

Типогр. М. Вартанянца и К°- въ Троиц. пер.

ԱԶՆՈՒԱԿԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Պ. ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆԻՆ

ԽՈՆԱՐՀԱԲԱՐ ՆՈՒԷՐ

Աշխատասիրողից

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Առաջիկայ երկրորդ հրապարակախօսութիւնս տալով տպագրութեան՝ մի քանի խօսք ունեմ մեծ. պ. պ. բարեկամներիս եւ հակառակորդներիս ասելու։

Անցեալ տարվայ աշխատութեանս գործի գլխին յայտնել էի որ՝ «ես աշխատում եմ՝ որքան կարողանում եմ։ Իրաւունք չէ իմ կարողութիւնից բարձրագոյնը պահանջելու»։

Ես չեմ պնդում, որ իմ կարծիքներս անսխալ են՝ դորա համար էլ կը խնդրէի որ՝ այդ սխալները ուղղէին՝ հերքէին փաստերով՝ այդ օգուտ էր թէ ինձ եւ թէ հասարակութեան։ Բայց իմ հակառակորդներս հայհոյում են միայն՝ որ ոչ իրանց է վայել՝ ոչ ինձ օգուտ է եւ ոչ ընթերցող հասարակութեան։

Զարմանալի անձինքներ ենք մենք. փողոցումը միմեանց պատահելիս՝ ուր կարող ենք իրար հայհոյել. խօսում ենք

կում չեմ եղել։ բայց խմբագրութեան յայտնի է, որ այդ տեղից այս տարի շատերը ինքնին յետ են ուղարկել թերթը, յայտնելով որ չեն համակրում։

Լրագրական ամեն մի յօդուածից հասկացվում է թէ ինչ հոգով է գրված։ Գրականական նախապատասխանների մուրացկանութիւնը, անձնական նեղ հայհոյանքներով լի պօլեմիկան, պակասութիւններ շողոքորթող, ձեւի համար գրվածները անհոգի են լինում միշտ եւ անկարող համակրութիւն ստեղծելու։

Իմ շնորհակալութիւնս եմ յայտնում մեծ. ունկնդիրներին, որոնք այս երկրորդ անգամն է որ պատվում են ինձ իւրեանց ներկայութեամբ, մասնաւորապէս «Մշակի» մեծ. խմբագրին, որ միշտ քաջալերել եւ խրախուսել է, որի թատրոնի ձրի մուտքը միշտ բաց է եղել ինձ համար։ Նոյնպէս շնորհակալութիւնս եմ յայտնում մեծ. գնդապետ Ադէրբանդր Թոմմայեան Մելիք-Հայկազեանին, որի ծախսով տպագրվեց «Հայրենիքի պահանջներ» եւ որին ներկայ աշխատութիւնս նուիրելու պատիւն ունիմ։

լի խօսքեր։ Մանում ենք խմբագրութեան էջերում, ուր գոնէ պարտական էինք բարոյական լինել. այնտեղ հայհոյում ենք միմեանց։

Անցեալ տարվայ հրապարակախօսութեանս պատճառով, «Մեղուի» խմբագրութեան կողմից ինձ վերայ յարձակվեց մի հինաւուրց հերոս. պ. Շշմանեանը։ Նա ինձ անուանել էր ռուսահայոց եւ տաճկահայոց մէջ ատելութիւն սերմանող. թափել էր ինձ վերայ մի կարկուտ թշնամական բառերի։ Ես այդ առանց ապացոյցների գրուած տողերին չը պատասխանեցի. պակասութիւնը վերագրելով խմբագրութեան աշխատակցի հասակին։ Ես բաղդաւոր էի համարում, որ պ. Շշմանեանը ինձ թշնամանում էր Մ. Նալբանդեանի շարքին։ Հանգուցեալի յիշատակի հետ, ես ուրախութեամբ կը բարձրանամ Շշմանեանների կառուցած կախաղանի վերայ։

Այս տարի դարձեալ նոյն հինաւրեայ խմբագրութիւնը յարձակվում է։ Պէտք է ասել որ, նա մեծ յառաջադիմութիւն է խիստ քաղաքավարի, ասում ենք հաճե-

արել այս անգամ։ Նա քարոզում՝ յորդորում է իւր ընթերցողին արհամարհել՝ ունկնդիր չը լինել ինձ... գեղեցիկ միտք՝ քարոզութիւն վայել է մի խմբագրի հոգւոյն եւ ուղղութեան։

Ամենքը խոստովանվում են որ՝ հայրենիքը իմաստասիրված չէ՝ ուսումնասիրելը անհրաժեշտ է՝ երկու տարի է որ այդ խօսքերը ձանձրանալու չափ լսվեց. եթէ գիտնականները չեն կատարում այդ պահանջը՝ ինչի՞ մեղ (տգէտներին) արգելել։ Դա նշանակում է որ «դուք չէք մտնում՝ եւ որոնք մտնում են՝ թոյլ չէք տալիս»։

Արժէր ասում է «Մեղուն» 3½ հայ ունեցող Մագուն ուշադրութեան առարկայ շինել։ Ես հարցնում եմ՝ ժամանակի պահանջմանց համապատասխանն էր Սիսականի ուսումնասիրութիւնն։ Զգաց խմբագրութիւնը որ՝ դա ոչ ոքին չը հետաքրքրեց եւ ինքը միայն մնաց իւր պաշտպանած առաջարկութեան հետ։

Խմբագրութիւնը պաշտպանում է նաեւ վարժապետներին որոնց շարքին՝ համբերութեան համար երեւի՝ ինձ էլ իւր շնորհն է անում։ Ինչի՞ նա այդպէս նեղ է հատ-

կանում՝ կողապատել բառի նշանակութիւն։ Աշակերտների ժամանակին, նոցա վարքի բարքի հետ խաղալ, գաւառաձանել, արտաքսել նրանց, զրկել մի ուսումնարան արժանաւոր ուսուցիչներից, լրտեսներով կաշկանդել նորան. ուսումնարանից կառավարել խմբագրութիւն, այնտեղ նաստած փէլիէտոններ գրելը, ուսումնարան կողապատել չէ։

Խմբագրութեան ցաւը ոչ Հայրենիքի ուսումնասիրութիւնն է, ոչ գաղափարութեան պիտանութիւնը կամ անպիտանութիւնը։ Թուրքերէն մի առած կայ. ասում են՝ որ ազաւէսը 39 առակներ ունի՝ 39-ն էլ հաւ բռնելու եղանակներին է վերաբերում։ Խմբագրութեան ցաւն էլ իւր «Մեղուն» է։ Գաւառական նամակներից տեղեկացել է նա՝ որ ես նորա տարածման արգելք եմ լինում։ Դա շատ սխալ հասկացողութիւն է. մի օրագիր՝ երբ ինքը շնորք չ՚ունի տարածվելու՝ արուեստական կերպով նրան երբէք չէ կարելի տարածել։ Ես մեղաւոր չեմ՝ որ նորա անունը Մագու չէ հասել՝ որ Երեւանում բաժանորդների թիւը զգալի կերպով պակասել է։ Երկու տարի է ես գանձա-

Այդ անձի ազնուասրտութեան հետ ընթերցողին ծանօթացնելու համար, բառ առ բառ թարգմանում եմ նորա ինձ ուղղած հեռագիրը։

Փոթի, ապրիլ 26-ին 1882.

„Շնորհաւորում եմ ձեր ճանապարհորդութիւնից ողջանդամ վերադարձը։ Բաւականութեամբ ընդունում եմ իմ հաշուին, ձեր բոլոր դասախօսութիւնների ուսպարութեան ծախսը. կանխապէս առորդրելով ամեն մէկից 100-ական օրինակների։“

ՄԻԼԻՈՒ-ՀԱՑԿԱԶԵԱՆ

Ներկայ աշխատութեանս աւելացրել էի եւ իմ ճանապարհորդած աշխարհի մեծագիր աշխարհագրական քարտէզ «Հայոց թագաւորների ամարանոց եւ ձմրանոց» անուանում, ինչ տեղ անձամբ եղել էի, ուշագրութիւն էի դարձրել գրից, լեռների գիւղերի եւ այլն աշխարհագրական անուանների ճշգրտութեան, որոնց անսխալ հընչում չէ յաջողվում օտարներին. օգուտ քաղելով նաեւ ամենանոր քարտէզներից։ Բայց մի քանի անկախ պատճառներից ստիպված չը կարողացայ հրատարակել։

Աւարայրի դաշտը դրել եմ 62°30′, 62°45′, 30°0′, 38°45′ լայնութեան եւ երկայնութեան տակ։ Խոյա (Հերեւ. Զարե-

ւանդ) հիւսիսում պարսկաստանից դէպի հայաստան եղած մեծ ճանապարհի վերայ։ Սխալմամբ ոմանք Մագուայ արեւելեան ձորաբերանի արձակավայրը Աւարայրի դաշտ համարելով։ Այդ տարածութիւնը կազմված է ամբողջապէս հրաբխական լաւայից եւ Մակու գեղը մաշեցնելով իւր ճանապարհը 2—4 սաժէն խորութեամբ քարեա օրօրանի միջից անցնում է, անմատչելի կացուցանելով իւր ափերը այր ու ձիուն եւ հեռեւակ ղինուորներին։ Այսպէս Տղմուտ անունը անյարմար կը ղինէր բոլորովին հատկացնել Մագու գեղին, քանի որ միւսը, գեղն էլ է տղմուտ դաշտն էլ եւ ափերը դիւրամատչելի։

Հրապարակախօսութեանս վերջաբանի տեղ խօսված «Գրիգոր սազի» աւանդական վէպիկը երկարութեան համար թող արի առանձին գրքոյկով հրատարակելու, նորա տեղը մոցրի գիւղական փարթամ ապեսի նշանակութիւն անունով յօդվածի համառօտութիւնը, որ պատրաստել էի ուսուցչական ժողովի նիստերի համար։

Ա. ԹՕԽՄԱԽԵԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ ԼԵՌՆԵՐԻ ՀԱՐԱՒԱՑԻՆ ՍՏՈՐՈՏՆԵՐԸ

—

Ա. Մաան

—

Նրեւանայ բեմի դերկարասիոնը։—Մկրտված աշխարհի հեթանոս ժողովուրդը։—Հոգի համար ապրողները։—Պատկերների հակապատկերը։—Կենդրոնի պարտականութիւնը։ — Պատմութիւնից քաղուածք հակա-համազգային սկզբունքների։—Ազգերի ատելութիւնը եւ մահը։—Համազգային գաղափարի սկիզբը։—Ի՞նչ հարկ անցեալը քրքրել։—Երկրի աշխարհագրական նկարագրութիւնը։—Ընագիտական երեւոյթներ։—Աւարայրի դաշտի ճակատամարտը։—Հայ աւանդութիւններ թաթարների մէջ։—Հոգեհանգստեանի տաճարը։—Թադէի վանքի նկարագրութիւնը։

—

Ուսումնասիրեցէք աւերակներ
Այնտեղ են անցեալ կեանքի ապացոյցներ։

ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ

Այս երկրորդ անգամն է, որ ես ձեր հրապարակական բեմի վերայ կանգնելու պատիւն եմ վայելում։ Աւելի վստահութեան համար, ինձ ցանկալի էր մտածել, դուք ամենքդ, որ ժողվված էք այստեղ, միացած էք արդէն ձեր մէջ միատեսակ մտածողութեան և միատեսակ զգացողութեան կապով, և ինձ ձեր հաղորդութեան կցորդ համա-

բերու մեծ պատիւը կը շնորհէք: Այսպիսի հանգամանքում և նրա ապաւորութեան տակ հեշտ է խօսել, մանաւանդ թէ ուրբան քաղցր է:

Աչա թէ ինչ մտքով ամրապնդած, ես համարձակվում եմ խնդրել ձեզանից, որ դուք տեղափոխվիք այստեղից Երևան, երևակայութեամբ միայն: Նորա համար, որ այդ դռնից մենք պէտք է մտնենք այն աշխարհը, որ ես միքանի ամիս առաջ ճանապարհորդել եմ:

Գոյս ունիմ, ուր ոչ ոք չի զղջալ այդ տեղափոխութեան համար: Երևանը մի շատ գեղեցիկ երկիր է. նորա բնակիչները եթէ վատ էլ գնահատեն, բայց եկաւորների համար անկարելի է չհիանալ նորա նկարչական տեսարանի վերայ և չը սիրահարվել:

Ամեն օր արշալոյսի հետ ես շրջում էի դէմքս դէպի սարերը, Մասիս, որոյ գագաթի յաւիտենական սառոյցը, գեռ արեգակի ծագումը ոչ որին չը յայտնված, շողշողում է նորա անդրանիկ ճառագայթների տակ, որին հեռաւոր ադգայինները, աւելի շատ, գիտնական օտարները ամեն կողմից տեսութեան են գալիս:

Դա տիեզերքի համար հին Կոտակարանի սարն է: Ամենի սկիզբը նորա բարձրութեանն է հասնում. Մեզ համար՝ աւերակների կեդրոն, խոնարհած թագաւորութիւնների կանգուն վկան է:

Այդ հսկայական լեռը, արարատեան դաշտի հա-

բաւայլն սահմանը գծելով, նկարված է հորիզոնի վերայ. ինչպէս մի անհնարելի և գեղեցիկ դեկորատիոն Երևանայ բեմի համար:

Երևանը ընկղմած է ազգային և կրօնական թանկագին յիշատակարանների մէջ: Նորա շուրջը խիտ առ խիտ սիրված են Հայկազեան, Արշակունեան, Բագրատունեան թագաւորութեանց բերդերի, ապարանքների, քաղաքների, եկեղեցիների և այլ նուիրական վայրերի փլատակները, որոնց կործանման փոշին դեռ բարձրանում է... Փոքրիկ մասը, որ դեռ կանգուն, նա էլ կործանման է սպասում...

Այսպիսի տեղերի վերայ, որի ամեն մի քարը խօսուն է, որի ամեն անկիւնը մեզ անցեալ հայկական պատմութեան մասերն է կրկնում, կարելի է աչքեաք ծնվել, զարգանալ, միանգամայն և անշարժ մնացած լինել բարի զգացմունքներով և կոխ տալ այդ աւերակները ամբարիշտ ոտներով և անանդամեան խորշոմներով: Մի երկիր, որ մկրտված է արիւնով, իսկ նորան կոխ են տալիս մարդիկ, որոնք հեթանոս են գործերով և սկզբունքներով:

Բացառութիւնները մի կողմ թող տրած, առհասարակ մտածելով, այդ շատ ճշմարիտ է, որովհետև մենք շինում ենք մեր տները, մեր դրացու հայի փլատակների վերայ, որ մենք ենք աւերել. մեզանից իւրաքանչիւրը ապրում էր իւր օգտին և

ընկերի վնասի համար, իսկումէ արենակցի կտոր հացը իր որովայնի համար: Առուտուրի մէջ խարդաւանում ենք միմեանց, դրացութեան մէջ բամբասում ենք ընտանիքները, քաղաքական գործերի մէջ մրոտում, անդունդն ենք գլորում իրարու, ուսումնարանների մէջ իրրև հոգաբարձուներ կամ իրրև նորանց հետ դաշնակցած ուսուցիչներ կոդոպտում ենք ուսումնարանները, եկեղեցոյ մէջ ծախու ենք հանում նորա սրբութիւնները: Բայց փ վերայ այսր ամենայնի մենք տրտմում, հառաչում նաև զայրանում ենք քրդերի և տաճիկների դէմ, երբ հարստահարութեան միտնէ լուր ենք ստանում մեր հեռաւոր եղբայրներից: Զգէտք է կարծել, որ մեր հոգեմաշ տրտմութիւնը ու հառաչանքը առ երևոյթս է. ոչ, մեր զգացմունքները իսկրտէ են, մենք ցաւում ենք, որ ինչու մեր ազգակիցներին քրդերը և թիւրքերն են հարստահարում և ոչ մենք:

Թիչ խօսքով ասել, մեր ժողովրդեան ամեն մի դասակարգի անդամը, լինի նա վարդապետ, քահանայ, վաճառական, արհեստաւոր, վարժապետ, աշակերտ, իւրաքանչիւրը նոցանից իր որոշ նպատակն ունի և իւրեանց նպատակը իւրեանք են միայն: Վարդապետը կամ քահանան ձեռնադրվում է կտոր հացի համար միայն. ուսուցիչը ուսուցանում է աշակերտը ուսանում է կտոր հացի համար միայն: Ոչ ոք չը կայ, որ նուիրուէ իւրեան

պաշտոնին. օրինակ եկեղեցականը՝ եկեղեցոյ պրոպագանդին, եկեղեցոյ օգտի համար. ուսուցիչը ծառայէր ուսման, ուսումնարանին՝ աշակերտների օգտի համար, աշակերտը սովորէր արհեստներ, գիտութիւններ՝ հասարակութեան օգտի համար: Այսպէս մենք ամենքս մեզ համար ենք ապրում. ոչ ոք հասարակութեան օգտի համար, ոչ ոք հայրենիքի համար: Մենք օգուտ չենք տալիս ոչ ոքին, օգուտ չենք ստանում ոչ ոքից: Մենք այդպէս ենք ընտանել միշտ ամեն ժամանակ:

Ահա մեր ազգի թոյլ կողմը, որ քայքայել է մեզ քաղաքական մարմնի կազմակերպութիւնից, որ քայքայում է հասարակական մարմնի անդամակցութիւնից:

Ո՞վ է տեսել մի հարկի տակ բնակվող մի գերդաստանի անդամներին, որոնք միատեսակ շահեր և միատեսակ թշնամիներ ունին, բայց նոցանից ամեն մէկը իւր համար քանդում է հասարակական պատսպարանի հիմքը: «Ինչ անմտութիւն», ասում ենք մենք մեզի, երբ այդպիսի օրինակներ կարդում, կամ լսում ենք: Միթէ կարելի է, որ մարդը այն տան հիմքը քանդէ, որի տակ ինքը պատսպարվում է. միթէ կարելի է ապրելի պէս բոլոր արիւնը ծծել այն աղբամերոյն, որին դիւզացի, ռամիկ են անուանում: Իսկապէս նա է միայն, [illegible] անգիտակցաբար, բայց ամենի համար է [illegible] ամենքս կրկնում ենք. տա-

ծում ենք, զգում ենք ոգևորված ժամանակներում, կամ երբ ոգելից ըմպելիները բաց են անում մեր բարի զգացմունքների դուռը. մեր միտքն են գալիս ազգութիւն, հայրենիք ասած բառերը: Մէկը առաջարկում է, «խմենք Ներսէսի կենացը», միւսը «խմենք Հայրիկի կենացը»: Այդ շատ ճշմարիտ է, որ մենք շատ ազնիւ բառերի կենացը միայն խմում ենք, կամ յիշում ենք խմելիս միայն. իսկ Խրիմեանը, Ներսէսը, կամ ազգը ինչ է շահում դորանից, քանի որ ոգևորող գաղերը մեզանից հեռանալով, մենք մնում ենք նոյն հին մարդը, միշտ սպառող ու թշնամի իւր սեփական զօրութեան:

Երանելի կ'լինէր, եթէ ձեզանից դուրս գար մէկը, խլէր ինձանից այս ամբիոնը և ներկայացնէր իմ նկարած պատկերի հակապատկերը. այսինքն ասէր իմ խօսքերը, ցոյց տար, որ կայ ընդհանրութիւն, որ մտածում է, գործում է անհատների համար, և անհատներ, որոնք ապրում են ընդհանրութեան համար: Կան հաստատված հիմնարկութիւններ, գիտութեան համար թանգարաններ, ընթերցարաններ, սովի դէմ շտեմարաններ. աղքատութեան, թշուառութեան դէմ բարեգործական հաստատութիւններ. տգիտութեան դէմ ուսումնարաններ, որոնցից դուրս են գալիս ոչ թէ ապուշներ կամ գրագիրներ, այլ կատարեալ մարդիկ հաստատամիտ սկզբունքներով: Կան ընտանեկան այնպիսի բարձր շրջաններ, որոնք զարգա-

ցնում են երիտասարդութեան բարի կողմերը և մղում են նորանց առաքինութեան, հայրենասիրութեան հերոսական ճանապարհի վերա և որ ամենից վեմն է, կան այնպիսի տիկիններ և օրիորդներ, որոնցից հայրենասիրութիւն է բուրում. նրանց մարմին և արիւն է դարձած ազգի բարձրութեան միտքը:

Իմ ակնարկած տիկինների և օրիորդների իդէալը: Նոյիշէի նկարագրած «Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք» կամ պարոն Բաֆֆիի ստեղծած «Դաւիթ բէկի» Սիւրին է:

Արդարև Երևանը պարտաւոր էր ունենալ յիշեալ բարեմասնութեանց կատարելատիպը. նա մայրաքաղաք է մի նահանգի և կեդրոն 200 հազարից աւելի հայ ազգաբնակութեան: Ցարակոյս չը կայ, որ այդքան հոգիների պատասխանատուութիւնը, որոնք բարոյական սնունդ են խնդրում, պահանջվում է նորանից: Մի շատ իրաւացի պահանջ, որին պատասխանում են չարիքներով և վատ օրինակներով: Ուրեմն ինչ կարելի է գտնել այն շրջապատումը, որի կեդրոնում կեանք, կրակ չը կայ: Այդպիսի շրջապատում բարոյական քայքայումի արշաւիրքից զատ ոչ այլ ինչ չէ կարելի գտնել: Նորա մի կողմում մարդիկ կան, որ մարմին են կողոպտում, միւս կողմինները մարմին էլ, հոգին էլ միասին են կողոպտում:

Մեր այս անհեթեթ պակասութեան վերայ խո-

սելիս, մենք Երևանը մէջ բերինք, միայն օրինակի համար: Հայերը ամեն տեղ միևնոյնն են, այն զանազանութեամբ, որ տեղ-տեղ մեղմ, և տեղ-տեղ խիստ աչքի ընկնող: Երևանի նման բոլոր նահանգների քաղաքները իւրեանց գաւառների կեդրոնն են, իսկ Տփխիս բոլոր նահանգական քաղաքների մայրաքաղաքն է:

—Գաւառական քաղաքներում մանաւանդ շատ է պատահում տեսնել ծերունիներին, որոնք մի պատի տակին հաւաքված, յիշում են իւրեանց ժամանակակից հասարակական անցքերը, վերջ ի վերջոյ դոցա ձախորդ վերջաւորութեանց վերայ կանգնելով եղրակացութեան համար ասում են այն նշանաւոր խօսքը, որ չը կայ մի հայ, որ ասած, կամ լսած չը լինէր այն թէ «հայերը անմիաբան են, անմիաբան են եղել, անմիաբան էլ կը լինին»: Ես էլ այժմս նոյն ծերունիների դրութեան մէջն եմ գտնվում և նրանց հետ միասին բամբասում եմ ազգը:

Ծերունիների խօսքերը շատ անողոք քննաւորութիւն ունին. նորանց կարծիքով, այդ անմիաբանութիւն ասված բանը հայերի կաշուն անբաժանելի կպած սնութիւնը լինի, որ նորա հետ միասին դոյացել է արգանդում և նորա հետ միասին աշխարհի վերայ երևացել է:

Ես այն ամենին յայտնի միտքն եմ կրկնում, որ աշխարհումը առանց պատճառի ոչինչ չէ եղել. եթէ

հայերը միաբանվել չեն կարողացել արտաքին թշնամիների դէմ, եթէ նոքա ոչ մի կապ չեն ունեցել ներքին կեանքի մէջ, եթէ նոքա եղել են հաւատարիմ, պիտանի ծառաներ օտար աշխարհներումը և տուն քանդող տէրեր հայրենիքի մէջ. եթէ թշնամիները հայերին հայերի միջոցներով են յաղթել. եթէ հայի ամենասարսափելի հարուածը հայից է ստացվել. այդ բոլորը հետևանքներ են նորան, որ նոքա ինչպէս մի ազգ, մի հայրենեաց որդի, երբէք չեն ապրել, երբէք չեն թագաւորել: Նոքա բաժանված են եղել բազմաթիւ ցեղերի, որոնք անդադար կրծել, մաշել են իրար: Այս խօսքերիս հարկաւոր են վկայութիւններ, որոնք ես կը վեր առնեմ մեր պատմութիւնից: Ամենից առաջ ուշադրութիւն պէտք է դարձնել մեր հին աշխարհագրութեան վերայ: Այն տասն և ութ բաժանմունքները, որոնց մենք նահանգներ ենք անուանում, դոքա ոչ այլ ինչ են, եթէ ոչ առանձին աշխարհներ, անջատված միմեանցից բերդերով, միմեանց դէմ պաշտպանվելու համար: Դոցա անուններն էլ, ինչպէս Գուգարաց աշխարհ, Ուտիացոց աշխարհ, Աղուանից աշխարհ, Աղձնեաց աշխարհ և այլն, հաստատում են այն միտքը, որ դոցանից ամեն մէկը մի ցեղի է պատկանել, երբեմն տիրող, երբեմն անկախ, երբեմն վասալ մի հզօր ցեղի: Բաւական է մեզ [illegible] մեկերորդ դարերի կառավարչական վիճակը: Մի-

այն Վերին արևելեան Հայաստանի փոքրիկ մասումը այդ ժամանակներումը իններ թագաւորութիւններ է յիշում պատմութեան մէջ, որոնք են. «Թագաւորութիւն Բագրատունեաց, թագաւորութիւն Արծրունեաց կամ Վասպուրականի, թագաւորութիւն Կարուց կամ Վանանդայ, թագաւորութիւն Թաղաց կամ Կապանաց, թագաւորութիւն Սիւնեաց կամ Փարիսոսի, թագաւորութիւն Աղուանից կամ Կիւրեղեան, թագաւորութիւն Զորագետոց, թագաւորութիւն Անձևացեաց, թագաւորութիւն Դարբանդայ»:

Պէտք է աւելացնել որ մնացած բոլոր նախարարութիւններն էլ մի-մի թագաւորութիւններ են եղել առանց այդ տիտղոսի: Պատմութիւնն էլ դոցա տէրեր է անուանում, ինչպէս Սիւնեաց տէր, Մամիկոնեից տէր և այլն:

Միայն այդ բոլոր ցեղերի մէջ նշանաւոր են եղել Հայկազեանց, Արշակունեաց և Բագրատունեաց հզօր ցեղերը, որոնք և երբէք չեն կարողացել բոլոր հայերին տիրապետել: Բացառութիւն պէտք է համարել Արշակունեաց չորս թագաւորներին, այսինքն Վաղարշակայ, Արշակայ, Արտաշէսի և Տիգրանայ օրերը, որոնք միացած ուժով դէմ են տուել արտաքին թշնամիներին: Այնուհետև նոցա յաջորդները ընկել են ցեղերի ազդեցութեան տակ և յետոյ յետ թուլանալով կորցրել են անկախութիւնը: Այսպէսով «բաժանեա զի տիրեսցես» Հռոմէական կա-

նոնի համաձայն, հայերը օտարներից տիրապետվելու համար միշտ պատրաստ, այսինքն իրանք իրանց մէջ բաժանված են եղել. դորա համար էլ, չնայեած նորա աշխարհագրական ամուր դրից, բերդերի շատութեան, բնակիչների քաջութեան, մեր հայրենեաց դռները միշտ բաց են մնացել աւերող օտարների արշաւանքների դէմ:

Այս ամենին յետևում է, որ նախնի հայերը քաղաքականապէս չեն ապրել, ինչպէս մի ազգ, մի կառավարչական մարմին: Համազգային գաղափարը կամ չէ եղել, կամ նորա զարգացումը ճնշված է եղել ցեղականի տակը:

Ցեղապետական դարերի կեանքը վաղուց անցել է. համազգային գաղափարով ապրելու տարեգլուխը կարելի է այն թուականից համարել, երբ մեր նախարարական, թագաւորական մի խումբով ազնուական ցեղերը ջնջվել վերջացել են մեր միջից, թող աներով մինչև այժմ շարունակվող տխուր հետևանքները: Այդ հետևանքները թերևս այնքան էլ երկար չշարունակվէին, եթէ մեր հոգևորականութիւնը ազնուականութեան տեղը չբռնէր: Մեր հոգևորականներն էլ իւրեանց հոգւոյ և մարմնոյ տիրապետութեան ժամանակին պատմութեան մէջ մի աչագին տեղ են բռնում իւրեանց կաթողիկոսական, պատրիարքական, եպիսկոպոսական խայտառակ բարձակոխներով: Նոցանից ամեն մի հիսաղութիւն ամենեցունց քարոզող արեղան իւր նպա-

տակին հասնելու համար, գոհել է ժողովրդի անդորրությունը և վանքերի թանկագին ստացվածքները և դինել է եղբայր եղբօր դէմ: Նա կինդրէի մեծապատիւ ունկնդիրներից ուշադրութիւն դարձնել մի երևոյթի վերայ. դա է, որ ամենաանպիտան հայերը միշտ վանքերի մօտ բնակված հայերն են եղել: *)

Պատրիարքական և Կաթողիկոսական ինտրիգները նուազում են, անցեալի հանմատութեամբ. կրօնաւորների մի քանի նշանաւոր գլուխներն էլ նորա կողմն են: Ազնուականութեան յաջորդութիւնը կատարեալ անկման մէջ է. այդպիսի անմիխիթար վիճակի մէջ նա չի եղել իւր բոլոր պատմութեան մէջ: Նա ընկել է իւր մէջ և ազգի ա-

---

Ծանօթ. *) Մի քանի օրինակներ ցոյց տալու համար յիշում եմ Տաճկա-Հայաստանի Սուրբ Կարապետի վանքը: Դրա մօտ մի Սօրզար անունով գիւղ կայ, որի մէջ ապրում են քառասուն տուն հայ ժողովուրդ: Այդ բազմութիւնը ոչ մի գիւղատնտեսական պարապմունք չունի, որոնք ամեն բարի յատկութիւններից մերկացած զրաղուած են միաբանների գործերով . . . . և այդ եղանակով են ապրում: Չիարաթի գիւղում որ վանքից աւելի հեռու է, աստիճանաբար փոքրանում է այդ տեսակ ամօթալի պարապմունքներով ապրողների թիւը: Գիւղացոց կէսը երկրագործութեամբ է պարապում: Չիարաթից այն կողմը չի անցնում արեղաների ազդեցութիւնը: այն կողմը բոլորովին փոխվում են գիւղացոց վարքը ու պարապմունքները:

ռաջ: Նա անզգայ է մնացել ժամանակի պահանջի դէմ: Ուրեմն ինչ կապ, յարաբերութիւն կարող է մնալ այն առաջնորդողի և առաջնորդուածի մէջ, երբ առաջնորդողը յետ, իսկ առաջնորդուածը առաջ է գնում:

Եթէ չեմ սխալւում, կարծեմ, մենք այս վիճակի մէջ ենք գտնւում այժմ:

Բայց ինչ հարկ կար, կէարցնեն ինձանից, մի ճանապարհորդական տեսութեան համար, իրար վերայ ածել աղգն ու ցեղը, խառնել պատմութեան տակն ու գլուխը:

Ես ներողութիւն կ'խնդրէի մեծ. ունկնդիրներից իւրանց յայտնելու, թէ այն երկիրը, ուր ես մի քանի ամիս առաջ պտտեցի, նա ինձանում արթ-

---

Բղնունեաց ծովի արևելեան եղերքումը, Վանից 7 ժամ հեռաւորութեան վերայ շինված է Ասպարաձին անունով վանքը և գիւղը: Դա ժամանակով կրօնաւորաց տեղ է եղել, բայց գիւղացոց յաջողվել է հալածել կրօնաւորներին և այժմ ինքեանք են կառավարում վանքը, կամ կառավարվում են վանքում: Դորա բնակիչները կոչվում են Ցիրամոր մարդիկ, որոնք ոչ միայն Վասպուրականի, այլ և Պարսկա-Հայաստանումը Դիադինումը և Աղաշկերտումը յայտնի են իւրեանց անեղեռ և անխիղճ բնաւորութեամբ: Նորա բռնութեամբ քաշում տանում են խաստուտիկ հորթեր, եզներ, կովեր: Այդ գունաւոր բիծերը նորա համարում են Ցիրամոր նշանը, որով որոշվել են նորա մատաղացուները: Դրա համար է, որ այդ կողմերը այդ տեսակ կենդ-

նայրեց անցեալի յիշատակութիւնները, իր հին հայերի կեանքի նմանողութեամբը: Թէև այնտեղ չկան հայեր այժմ, այնտեղ ապրում են թիւրքեր՝ բայց ապրում են հին եղանակով: Պատմական նախարարներ չ'կան, բայց կան խաներ, ցեղապետներ, որոնք նոյնպէս աւերում են, կրակի են տալիս միմեանց երկիրները, մնասում են ընդհանրութեան, իւրեանց անձնական թշնամութեան համար: Նոքա նոյնպէս տիրապետում են միաչեծան. ամբողջութեան, գոյութիւնն ու կեանքը անպայման կերպով ենթարկուած է անհատի հաճոյքին և կամակայութեանը:

Մեր պատմութեան մէջ մեզ ուսումնասիրածը ժողովրդական կեանքի մասն է. մինչև անգամ կարելի է ասել, որ մեր պատմութիւնն ազնուա-

---

դանիներ քիչ են գանվում: Բնակիչները Տիրամօրցոց ձեռքից ազատելու համար մորթուում են: Այն տեղ են հաւաքվում երկրի բոլոր ուրուկները բժշկվելու մոգ, թերևս այդ սովորութիւնները պատմական ժամանակներից մնացած լինեն: Այդտեղ են հաւաքվում մի տեսակ վերքերով ծածկված մարդիկ. այդ վերքը անուանվում է «Տիրամօր եարայ» որով Տիրամայրը պատժում է այն ամենքին, որոնք իրան մատաղ չեն տալիս: Տիրամօր եարան ոչ այլ ինչ է, եթէ ոչ վեներական վերքեր: Անդրկովկասի վանքերը ուշադրութիւնը իւրեանց շրջակայքում բնակվողների վերայ ծանօթ լինելով ունկնդիրներին, աւելորդ եմ համարում դոցա վերայ խօսել:

կան ցեղերի պատմութիւնն է միայն: Այնտեղ ժողովրդական պարապմունքների և արհեստների մասին ոչինչ չը կայ *:

Պատմութեան մէջ առհասարակ ժողովրդի, այդ ռամիկ կոչված արարածների վերայ խօսում է այն ժամանակ միայն, երբ որ նոքա տոմից կամ վարակիչ հիւանդութիւններից ջարդվել են տասնեակ հազարներով, կամ մի բռնաւորի ոտի կոխան են եղել, գերի են գնացել և կամ դաղթել են: Դրանով միայն մենք հասկանում ենք, որ Հայաստանում ժողովուրդ էլ է եղել: Բայց նա այնքան ոտոր է եղել, որ Ջորիների ու ագնիւ ձիերի ցեղերը աւելի լաւ մտքում են յիշվում պատմութեան մէջ: Իսկապէս նա դրօի նշանակութիւն է ունեցել,

---

* Մանօթ. 1878-ին Գանձակի հարաւային լեռները (Արցախի մէջ) Գարդմանաց Փառիսոսի, Քարհատի, Գետաբեկի և Սկանապատի շուրջը պատելիս ես պատահեցի հին բազմաթիւ հանքային բուսատեղերի, մանաւանդ Քարհատի ձորը, ուր հարիւր հազարաւոր մարդիկներ աշխատել են այնտեղ. անհամար հին հանքահորերով (շախթ) բոլոր տարածութեան մակերևոյթը ծածկված են: Ցայտնի չէ թէ ինչ են հանել երկրի խորքերից: 1863-ին Սկանապատումը մի պղնձի հանքահոր գտնվեց, լիքը հանքային գործիքներով: Փիփ գիւղի բաղչեղի հարաւում հին հանքի մօտ մի տեսակ սպիտակագոյն մարմարի հանք կայ, ուր դեռ նշմարվում են հին ադոցած կտորներ: Բանանց և Խաչակապ գիւղերում մինչև այժմ էլ շարունակում են բոլորովին գործել իւրեանց հանքերի երկաթը: Փիփեցիք մինչ-

որ թուերի կողքին դրուելով գումար է կազմում:

Հայ ազնուականութեան սիստեմը միշտ անասնութեան աստիճանի է հաւասարեցրել ժողովրդի վիճակը, և դրա համար է որ Օշականցի Մարիկը հող չի գտնում իւր հայրենիքում զարգանալու, բայց Ցունաստանում դառնում է կայսր*): Այդ մէկը միայն ես օրինակի համար յիշեցի. Ձեզ թող կանեմ յիշելու բոլոր հայոց երևելի տաղանդները, որոնք փայլել են օտար ազգայ մէջ և օտար ազգաց օգտին: Ժողովրդական դասակարգից բարձրացած հերոսներ մենք չենք ունեցել մեր մէջ. սորուկների միջից երբէք հերոս չի ծնվել:

Ահա այդ հայեացքով ես նմանութիւն եմ գտնում

չև հանքի կառավարութեան ձեռք անցնելը պատրաստում էին բաղեղ: Դա հին հայոց արուեստագործութեան շարունակութիւնն է, որ հասնում է մինչև մեր օրերը: Բայց պատմութիւնը ոչինչ չէ յիշում, թէ այդ ամենը երբ են մշակվել: Գետաբեկի (Գետաբեկ) յոյն բնակիչները աւանդութեամբ պատմում են, որ Գետաբեկի այժմեան գերմանացի Սեմենա եղբայրների պղնձահանքը հնում հայոց թագաւորական յանցաւորների համար նշանակված հանքահորերն են եղել, ուր բազմաթիւ դատապարտ-

---

*) Մանօթ. Հետաքրքիրների համար կը յիշեմ, որ մինչև այսօր էլ Օշականում մնում է Մարիկենց տունը, որի դուռն կանգնեցրած է մի արձան ատագիլի բոյնը գլխին. դա կայսրն է կառուցել իւր հանգուցեալ հօր գերեզմանի վերայ.

պատմական հայ ռամիկի (ժողովրդի) Մագուայ խանութիւնների մէջ գտնուած ժողովրդի հետ:

Առ այժմ թոյլ տուէք ինձ նորա աշխարհագրական դրից վերայ մի համառօտ հայեացք ձգել:

Իմ ճանապարհորդած աշխարհը հնում բաժանվում էր երեք գաւառների, որք են՝ Գոգ-հովիտ, Վարաժնունիք և Արտազ: Առաջինը գտնվում է Արարատեան նահանգի մէջ և այժմ բաժանված է երեք տէրութեան սահմանագլխների. երկրորդը գտնվում է Տուրուբերան նահանգի մէջ, որի մեծ մասը Տաճկաստանին է միացած. երրորդը բոլորովին Վարաժնունեաց փոքրիկ մասի յետ պատկանում է Պարսկաստանին:

վածները ստորերկրեայ աշխատանքով քաւել են իւրեանց յանցանքները: Գետաբեկի շուրջը մինչև 7 հին ժամանակում մշակված պղնձի հանքահորեր կան: Խորենացին միայն Արտաշէս Բ թագաւորութեան ժամանակին է նուիրում արուեստից վերաբերութեամբ մի քանի համառոտ անորոշ տողեր. «Արուեստից գիտութիւն որ ինչ յաւուրս Արտաշիսի» խորագրի տակ, որոնք ընդօրինակում եմ այստեղ: «Զի թէպէտ և զայլն ամենայն զոր ինչ յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն, կարգ և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան 'ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն, այլ 'ի մեծամեծ արուեստից և 'ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և ասպատակայ պարսպեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեմ

Ժամանակի հոսանքները զանազան անուններ են տուել այդ աշխարհի մասերին. Գոգ-հովիտի մի մասը, որ Պարսկաստանին է պատկանում կոչվում է Աւաջուզ. Վարամնունեաց մասը կոչվում է Հշարդերան. Արտաղի մի մասը՝ Բաբալիք. Աւարայրի դաշտի կողմերը առանձին անուն չունին և ճանաչվում են Գարագեադին գիւղի անունով:

Ցիշեալ գաւառները մի քանի դաշտեր և հովիտներ ունին, նոցանից Մագուայ դաշտը եզերում է Նրասխին հարաւա-արևելեան կողմից և ձգվում է հիւսիսից դէպի հարաւ մինչև Աւարայրի դաշտը, որից զատվում է մաներ բլրակներով. արևմուտքից տարածվում է մինչև Մագուայ ձորը: Այս դաշտը կտրում է Մախաթ լեռների դէպի հարաւարևելք ձգուած շարունակութիւնը: Մախաթ լեռները Մասիսի փոքրիկ բլուրներն են, որին միանում են Գամբատ լեռներով: Մագու դաշտի վերայ զետեղուած են մօտ քսան և հինգ գիւղեր,

---

և զամաց և զտարեաց բոլորմանց: Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց ազգաց վարելով. և ոչ 'ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ 'ի վերայ զետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որսոց. այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք. բայց գոյզն ուրեք՝ ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերութեամբ և այլովք այսպիսիովք կեցեալք: Եւ այս ամենայն յորինի յաւուրս Արտաշիսի»:

Խ-ը. Գ. Ծթ. Էջ. 202.

որոնք բաց առած մի քանի քրդերները մնացածների բնակիչները Աղրբէջանի թաթարներ են: Դորա արևմտեան եզերքից հոսում է Մագու գետը, կամ Ագ-չայ, որ դուրս է գալիս Մագուայ ձորից:

Աւարայրի դաշտը գտնվում է 62° 30′, 62° 45′, 39° 0′, 38° 45′ լայնութեան և երկայնութեան աստիճանների տակ: Աւարայրի դաշտի շուրջը բնակվում են Ալալ-լահիք, կամ Գարագոյունցիք և թաթարներ, կազմելով մօտ տասն երեք գիւղեր, որոնց գլխաւոր տեղին է Ղարաղեաղին: Այդ սրբազործած դաշտի վերայ այժմ ոչ մի հայ չէ ապրում:

Աւարայրի դաշտի միջից է անցնում Տղմուտ գետը, որ գլխաւորապէս սկսվում է Տաճկահայաստանի արևելեան սահմանագլխի Շաւարշ (Շաւարէշ) լեռների հարաւային կողմերից և հոսելով արևմուտքից դէպի արևելք, երկու հաւասար մասերի բաժանելով Աւարայրի դաշտը, Մարիքենդ գիւղի մօտ խառնվում է Կարմիր կամ Կօթուր գետին և նորա հետ թափվում է Երասխի մէջ Դարաշամ գիւղի մօտից:

Աւաջուղը ընկնում է 62° 0′ 61° 45′, 39° 30′, 39° 15′ լայնութեան և երկայնութեան տակ, 7240 ոտնաչափ բարձրութեան վերայ: Արևմուտքից սահմանակից Տաճկաստանի Զաղկոց (Ալատաղ) լեռան:

Աւաջուղը մի հրաշագեղ, գոգաձև հովիտ է, կարծես Գոգ-հովիտ գաւառի անուան կոչումը այդ հովտից առնուած լինի: Դորա վերայ շինված են

տամներկու գիւղեր, որոնց մէջ բնակվում են քրդերը և մեծ մասամբ թաթարները: Ձնայնած, որ ես ձմեռնամուտին էի ճանապարհորդում այդ գեղաձիծաղ վայրերումը և ձիւնը նոցա բարձրութեանց վերայ օդակի պէս շրջապատել էր ամեն կողմից, բայց ինքն ըստ ինքեան երևում էր, որ այդ բեղմնաւոր և հոմատուն տեղերը շատ յարմար ապաստարաններ են խաղաղ երկրագործների և հովիւների համար և արժանաւոր ամարանոցներ են եղել մեր նախնի թագաւորազուններին: Վերջի պատերազմի ժամանակ Աւաջուղը առաստութեամբ մատակարարեց Ռուսաց Արևանեան բանակին դարի և ցորեան: Աւաջուղը առանձին խանութիւն է Պարսկաստանի իշխանութեան տակը, նորա գլխաւոր տեղին է Քիլիսա-քեանդ, ուր նստում է Փաշաիանը, երկրի կառավարիչը:

Աւաջուղին կից դէպի հարաւ ընկնում է Թայզաբարայ հովիտը 61° 45′, 62° 0′, 39°15′, 39° 0′ լայնութեան և երկայնութեան տակ: Արևմուտքից սահմանակից է Ցանկա-Հայաստանի Մահմդանը և Աբաղայ դաշտերն: Այս ջրալի հովիտը երկարացած է հիւսիսից դէպի հարաւ, ունի ընտիր մարգոգետիններ և պտղատու վարելահողեր: Տասն մէկ գիւղեր են շինված այս հովտումը, ուր ապրում են քրդեր և թաթարներ: Քրդերը մեծ մասամբ ապրում են նորա արօտալի լեռների վերայ: Այս աշխարհի գլխաւոր տեղին է Ղարայ-նի, ուր նստում

է Հայոտարանցոց ցեղապետ քուրդ Հիւսէին աղէն, երկրի կառաւարիչը, որ երկու հարիւր յիսուն վրանաբնակ քրդեր և քանի թաթարների գիւղեր ունի իւր իշխանութեան տակ:

Աւաջուղի և Գարայ-նիի միջից է անցնում Ճաճկապարսկական տրանզիտների ճանապարհը:

Փոքր Մասիսի և Դամբատ լեռան մէջն է ընկնում Դամբատ հովիտը, որ թէև գեղեցիկ, բայց բոլորովին ամայի է մնացել: Դորա աւերակները և մեծամեծ ընկուզի ծառերը վկայում են, որ ժամանակով մշակված և ծաղկեալ վիճակի մէջ է եղել: Այստեղ Փոքր Մասիսի արևելեան ստորոտումը գտնվում են մեծամեծ քարայրներ, որոնք դեռ քննված չեն: Դամբատ հովտի վերջին բնակիչները քրդերն էին, որոնք անցեալ սովին մեռան և մնացեալները ցրուեցան:

Այս աշխարհի ամենամեծ գետը Մագու գետն է, որ ուռոգում է Մագուայ դաշտը: Նորա մի ճիւղը սկսում է Ճաճկա-Հայաստանի Եխալի լճից, որ Բայազիտի հիւսիսումն, Մեծ Մասիսի ստորոտումն է: Միւս ճիւղը իջնում է Աւաջուղից, որ Սանգիար գիւղի մօտ խառնվում է առաջինի հետ, իսկ երրորդ ամենամեծ ճիւղը բաժանվում է երեք գլխաւոր սկիզբների. առաջինը, Սարիդայիր, սկսվում է Շաւարշ լեռների հիւսիս-արևելեան կողմերից և ուռոգում է Թայզաբարայ հովիտը երկրորդը, Կուսանաց գետը, իջնում է Աւաջուղի հարաւային

սահմաններից և բերելով Արշակաւան քաղաքի աւերակները, Հարամլու ձորումը միանում է Սարիգայիրի հետ: Նյրորդը բղխում է Սանսարուկ և Սաեար լեռներից, անցնում է Թադէոս առաքելոյ վանքի տակից: Այս երեք ճիւղերը Ասպարաժին վանքի աւերակների մօտ խառնվում են իրար և կազմում են Ջենդիւմեր գետը, որ Ակի ժայռոտ և դժուարակոխ ձորից անցնելով հարաւից դէպի հիւսիս Օղակ գիւղի մօտ խառնվում է վերոյիշեալ ճիւղերի հետ և շրջելով ընթացքը դէպի արևելք, մտնում է Մագուայ ձորը:

Ամենից հետաքրքրական երկու Մասիսների մէջ եղած հարաւային ստորոտներն են, ուր ամեն քայլափոխում ճանապարհորդը պատահում է հնութիւնների. մի տեղ երևում են քանդուած եկեղեցւոյ պատերը, միւս տեղ պարիսպների հիմունք, բնակարանների հետքեր և այլն: Այդ դեռ անծանօթ վայրերի վերայ մի գաղափար ունենալու համար, ես մի քուրդ առաջնորդ գտայ, որ ծանօթ էր նոցա դժնդակ շաւիղներին: Հակառակ առաջնորդիս նախազգուշութիւններին ճանապարհի վտանգների և անտանելի դժուարութեանց մասին, կէս գիշերին մենք ուշ ճանապարհ ընկանք, որովհետև ձիով շարժուիլը անկարելի էր: Ինձ շատ հետաքրքրական էր տեսնել մի բնակված քարայր: Վեց ժամ երկու Մասիսների միջի ուղղութեան վերայ մագլցելից զկնի, լուսաբացին մենք հա-

սանք մի քարայրի դռան, որ ներկված էր դժգոյն դեղնի և կարմրի խառնուրթներով: Այրի դռան շինված էր մի փոքրիկ խղիկ, այստեղ կենում էր այրի պահապանը, որ մի առոյգ ծերունի էր: Գիւղը բաղկանում էր վաթսուն տնից, որոնք իւրեանց ոչխարներով, տաւարներով, ընտանիքով տեղաւորուած էին այրի մէջ:

Երբ մտանք այրի մէջ միտս ընկաւ Վերգիլիոսի նկարագրած տարտարոսը:

Քարայրի ներսը սնացած էր ծխից. նորա աջ և ձախ անթիւ խոռոչներից, ուր տեղաւորուած էին ընտանիքներ, տաւարներ, ոչխարներ, սատանայի նման դուրս էին գալիս նորա բնակիչները, որոնց գոյնը դժգոյն դեղնութեամբ ներկվել էր ծխից: Ես առաջնորդիս յայտնեցի, որ ցանկանում էի այրի բոլոր խորերը պտտել: Նա իմ ցանկութիւնս հաղորդեց պահապանին, որ մեզ ընկերացել էր, բայց նա յայտնեց որ այդ բոլորովին անկարելի է. նորա համար, որ մենք քարայրի անթիւ բաժանմունքներում անտարակոյս կ'մոլորվէինք և թերևս այստեղից չ'կարողանայինք բոլորովին դուրս գալ. բացի այդ, շարունակեց նա, ճանապարհի վերայ կան այնպիսի լայն վիհեր, որոնք իջնում են երկրի խորը և լիքն են ջրով, դրանք կամրջելու համար հարկաւոր էին փայտեր և տախտակներ, որոնք այնտեղ չկային:

"Բայց դուք չ'գիտէք, թէ այրը ինչքան է ձրգ-

վում, որքան բաժանմունքներ ունի, ուր է վերջանում նորա շարունակութիւնը, հարցրի ես:

—«Այդ միայն Աստուծոյ է յայտնի», պատասխանեց պաշտպանը:

Յուսահատված այդ պատասխանից ես սկսեցի ընտանեաց բնակարանները այցելել. մի քանի այցելութիւնից յետոյ ես մտայ նոցա մեծաւորի բաժնումը. ցեղապետը բացակայ էր: Նորա բնակատեղին բաւական ընդարձակ էր, ուր մի երկար և տաս ոտք լայն մասը նշանակված էր ոչխարների համար, նորան կից բաւականին լայն և բարձր մասը նշանակված էր տաւարների համար, որոնք բոլորն էլ արածելու էին դնացել: Խոռոչի ձախ կողմը՝ որ բոլորակ ձև ունէր, տասն և չինեղ ոտնաչափ շրջապատով ապրում էին իշխանի ընտանիքը և աշա տանտիկինը (եթէ թոյլ կ'տաք ինձ ասելու իշխանուհին) վառել էր աթարի կրակը, նորա վերայ հաստատել էր սաջը և կորնկի հաց էր եփում: Իմ ներկայութիւնս բոլորովին նորան չընդմիջեց և ոչ նորա չորս չինեղ չարաճճի տկլոր մանուկներին, որոնք յափշտակում էին դեռ կիսաեփ հացը՝ իսկ մայրը պատահողի գունդ գլխին տրփացնում էր իւր ալրաթափ ձեռքի հարուածները: Աշա ինչ ժամանակից են սկսում քրդերը յափշտակութիւն սովորել, մտածում էի ինքն իրանս, երբ թեւից ձիգ տուին. ես շուռ եկայ և մթութեան ու ծխի արանքից նկատեցի Բրոյի (իմ առաջնորդի) դէմքը, որ

նշանացի կանչում էր ինձ: Ես չեռնեցի նորան և մենք մտանք մի անբնակ խոռոչի մէջ: «Ի՞նչ կայ, Բրօ», հարցուցի:

—«Այս քրդերի միտքը փոխվում է», պատասխանեց, «քո փայլուն զէնքերդ և փայլուն կոճակներդ սաստիկ հրապուրել են դրանց։ Դոքա կարծում են, որ քո գրպաններդ լի են ոսկով, այսպիսի հրապուրանքը մեզ համար վատ վախճան կ՝ ունենայ», շարունակում էր Բրօն,—«ուրեմն քանի որ օր ունենք, պէտք է շտապենք այստեղից հեռանալու»:

«Միևնոյն չէ», պատասխանեցի ես, «այստեղ սպանողը դրսումն էլ կարող է սպանել, լաւ չէ, որ այս խոռոչում մենք մեզ պաշտպանենք»:

—«Այստեղ կարող են մեզ փակել և սովամահ անել, դուրսը մեր փախստեան ճանապարհը բաց է և ժայռերը կը պաշտպանեն մեզ», պատասխանեց Բրօն:

Բրօյի խորհրդածութիւնը շատ իրաւացի էր: Փոքր մտածելից զէնի սկսեցի առաջ գնալ, հրամայելով Բրօյին որ ինձ չեռնի:

Այրի դռան ծեր պահապանի գլխին հաւաքվել էին երիտասարդ քրդերը, որոնք մեզ տեսնելուն պէս մի մի կողմ ծածկվեցան: Սա շատ վատ նշան էր:

Բրօն մի շարժում արեց փախչելու, ես պինդ կոխեցի նրա ոտքը, որ ցաւից հարայ տուեց, իսկոյն շուռ եկայ դէպի նա, իբր թէ ներողութիւն

խնդրելու համար, և նշանով սատեցի նորան որ կանգնի, յետոյ դառնալով դէպի պահապանը հարցրի:

«Այս կողմերը չկան արդեօք հին շինուածքներ, խաչարձաններ, գրքեր»:

—«Շատ կան», պատասխանեց ծերուկը, ձեռքը դէպի աջ ու ձախ շրջելով:

«Եթէ մենք վերադառնանք», կրկնեցի ես, «քարայրում մեզ դիշերելու տեղ և հաց կըտան»:

—«Սէր սարան սարան ճաւան», իմ դլխիս ու աչքիս վերայ, կեղծաւորութեամբ դլուխը խոնարհեցնելով և աջ ձեռքը սրտին դնելով պատասխանեց պահապանը: Բրօն, որ իմ միտքս հասկացել էր, սկսեց գովաբանել նոցա հիւրասիրութիւնը:

Խօսք տալով, որ երեկոյին կ'վերադառնանք, մենք սկսեցինք ծանր ծանր հեռանալ. մի քանի քայլերից զկնի արդէն ժայռերը ծածկել էին մեզ չար ու բարի աչքերից: Մի ժայռի պատառուածքի արանքից Բրօն ինձ ցոյց տուեց այրի մուտքը, ուր կանգնած էին մօտ երեսուն հոգի զինեալ քըրդեր. և նոքա նայում էին մեր բռնած ուղղութեան վերայ, ինչպէս արծիւը նայում է իւր որսի վերայ:

«Շատ ուշ, մոմաց Բրօն»:

—«Դրանք ինչ են ուզում», հարցրի ես:

«Դրանք կամ մեր ճանապարհը կ'կտրեն, կամ մեր ետևից կ'ընկնեն. մեզ մնում է միայն շտապել և մեր բռնած ուղղութիւնը փոխել»

—«Ուրեմն առաջ ընկիր», ասացի ես։

Բրօն ընկաւ առաջ, պատվիրելով ինձ, որ շուտ շուտ յետ մտիկ անեմ, պատրաստ պահելով հրացանս։

Այնուհետև սկսվեց մի առջի արշաւանք։ Բրօն, այնքամի պէս, թէթև թռչում էր ժայռից ժայռ, կապկի նման մագլցում էր լաւանների կտորների վերայ։ Ես անտանելի դժուարութեամբ հետևում էի նորան։ ինձ սաստիկ նեղում էր հրացանս, որ ստիպուած էի պատրաստ ձեռումս պահել։ միայն հետամուտ փոսանդը ոյժ էր տալիս ինձ։ Ինչ զարմանալի տեղերից անցկացանք մենք։ դա ոչ թէ մի քարքարոտ, այլ մի քարէ անտառ էր։ Ամեն մի քայլափոխիս Բրօն ծածկվում էր աչքիցս։ ամեն յանկարդ քայլափոխին ես տեսնում էի Բրօին, որ մի ժայռի ծայրից ներքև էր սողում։ Իմ եղունգներս բոլորը փշրված և մատներս արիւնոտած էին։ Զգիտեմ որչափ տևեց այդ արկային արշաւանքը, երբ Բրօն յանկարծ կանգնեց։

«Ի՞նչ կայ Բրօ»։

—«Մենք այլևս առաջ չենք կարող գնալ։ մենք գտնվում ենք մի դահավիժի ծայրում, որը կտրում է մեր ճանապարհը ամեն կողմից»։ Դա Մասիսի անթիւ վիհերից մէկն էր, որ լաւային հոսանքները ստեղծել են։

«Ետ դառնանք և մի այլ անցք փնտրենք», ասացի ես։

—«Անօգուտ», պատասխանեց Բրօն, հարդէն մութն է, մենք մթութեան մէջ կապրենք և ժայռերին դիպչելով միշտ մշտ կը լինենք։ Բացի այդ մենք մոլորուել ենք։

«Ուրեմն գիշերենք այստեղ»։

—«Այո, այստեղ այնքան ապահով է, որ սատանէն անգամ մեզ չեն կարող գտնել։

Ես սաստիկ հոգնած էի, խնկոյն հրացանս և մէջքս կրթնեցրի քարին, պպզեցի և գլուխս երկու ձեռներիս մէջը դրի։

«Ի՞նչ ես մտածում», հարցրեց Բրօն։

—«Հիմա», պատասխանեցի ես, «իմ ընկերներս և ծանօթներս հանգիստ տաք սենեակում նստած թէյ են խմում»։

Բրօն ծիծաղելով իմ երևակայական գանգատը վերայ։—«կարելի է իրիկնահաց են ուտում»—հեգնութեամբ ասաց։

Նա ակնարկում էր, որ մենք ուտելու հաց չունինք. իսկ էլ. թնթնութեան համար ոչինչ չէինք վեր առել մենք, յուսալով, որ քրդերի մէջ կը գտնենք։ Խնկոյն միտս ընկաւ որ գրպանումս փոքրիկ շիշով օղի ունէի, ձեռս տարայ և բարեբաղտաբար անմնաս գտայ։ Այդ ոգելից ըմպելին այսպիսի հանգամանքներում խիստ կազդուրիչ է։ մանաւանդ մեզ համար, որ թէյի և իրիկնահացի տեղ էր բռնում. ախորժակով երկու կում խմեցի և շիշը առաջարկեցի Բրօին, որ քիչ նայելուց յետոյ,

կոխ տուեց Մահամմեդի տաճարանեայ պատվիրանների մէկը և անուշ արեց արաղը։ Բրօն, տաքացած ոգելի ըմպելիքով, ինձ շատ հետաքրքրական պատմութիւններ արեց Մասիսների քարայրների մասին, որոնց մէկը ես յարմար եմ համարում այստեղ յիշելու։

Սոմից առաջ, ասում էր Բրօն, Մասիսների այրերը բոլորը լիքն էին քուրդ բնակիչներով, որոնք ձմեռելու էին գալիս այստեղ։ Ես անդադար գնում գալիս էի իմ ծանօթների մօտ։ Մի անգամ մի անծանօթ քարայրի պատահեցայ և ներս մտայ այնտեղ. ես գտայ մեծ քանակութեամբ ղեկտների կտորներ իրար վերայ դարսած և գրած մագաղաթի կտորներ, գրքեր։ Գրքերը ինձ պէտք չէին, ես ձեռս տարայ ղէպի ղեկտեղէնները, որ նրանցից օգուտ քաղեմ, բայց ափսոս, որ նրանք ափիս մեջ մշրվեցան*) և հող դարձան։

«Չես կարող այժմ ցոյց տալ ինձ այդ այրը», հարցրի ես։

—«Ոչ», պատասխանեց Բրօն, «այդ այրը գտնելու համար մի շարաթ պէտք է մանդալ, այժմ ձմեռն է, այս ձորերը շատ անգամ ամբողջ շաբաթներով ծածկվում են մշուշի տակ, նոյն իսկ

---

*) Մանօթ. Մշրելը Վանեցիք գործ են ածում փուխր առարկաների մաքրելուն, ինչպէս փշրելը գործ է ածվում կարծր առարկաների համար։

այստեղ, այս գիշեր մենք ապահովված չենք մշուշի դէմ. Գիշերս կարող է մշուշը ծածկել մեզ և այս ձորերը, և մենք կորած ենք այն ժամանակ»: Յաւելով յիշեցի կողմնացոյցս, որ ես Աւաջազումը Փաշախանին էի ընծայել:

«Բայց մենք մոտակայ քարայրներում այդպիսի չանգամանքում չենք կարող ուտելիք գտնել»:

—«Բոլոր քարայրները այժմ դատարկ են, բացի այն մէկից, որ մենք տեսանք»:

«Ապա ինչ եղան նոցա բնակիչները», հարցրի ես:

—«Բոլորը մեռան սովից. մնացածները ցրվեցան»:—

«Ի՞նչու համար հարուստ ցեղերը չ՝օգնեցին այդ խեղճերին և չ՝ազատեցին նրանց սովից»:

—«Քուրդ ցեղերը»—պատասխանեց Բրօն.—«յաւիտենական թշնամութիւն են մնացանում իրար դէմ. ցեղերը ցեղերի դէմ յարուցանում են կռիւ, սպանութիւններ, կրակ, աւերումն և երբէք օգնութիւն: Ես ինքս մի հայի շնորհիւ ազատվեցայ սովամահից: Այդ մարդը իւր ընտանիքի կտոր հացից ինձ բաժին հանեց»:

Իրաւունք ունէր Բրօն, ցեղեր ցեղերին երբէք չեն օգնիլ: Ցեղապետական սկզբմանց մէջ այդ չկայ: Մի ցեղը իւր աճելութեան համար պիտի ճնշէ միւսին: Քրդերը, այդ մեր վայրենացած ազգակիցները մեր պատմական կեանքի տխուր պատկերն են ներկայացնում: Որովհետև նրանց մէջ դեռ ազնուա-

կանութիւնը պահպանում է, որ մի ազգը անթիւ ցեղերի են բաժանում: Ամեն մի քուրդ իւր ցեղապետի անպայման գիրքն է: Եւ ինչ կը լինէր մեր Ճանկաստանցի եղբարց վիճակը անցեալ մեծ սովին, եթէ մեր նախարարական ցեղերը դեռ ապրել շարունակէին: Հաւատացնում եմ Ձեզ, որ ոչ մի հայ չ'էր ապրի պատուհասից. և մենք Ճանկա-Հայաստանումը այժմ ազգի տեղը նորա ընդարձակ գերեզմանատունները կը գտնէինք միայն: Յովհաննէս կաթողիկոս, Առաքել պատմագիրը և ուրիշները սարսափելի պատկերներ են ներկայացնում սովի ժամանակում կատարված, թէ ինչպէս եղբայրը եղբօր սպանել է, հայրը իւր որդուն մորթել է, մայրը իւր աղջկան կ'երել է. բայց ոչ մի տեղ յիշված չը կայ, որ մի հայ միւս հային օգնած լինէր մի կտոր հաց տուած լինէր:

Այսպիսի տխուր մտածմունքներ փարատելու համար, ես խնդրեցի Բրօյից, որ մի հեքիաթ ասի, իսկ ինքս պատրաստուեցի երկու քարի արանքումը քնել: Բրօն սկսեց պատմել, ինչ, որ մի քուրդ ցեղապետի անելման աղջկան, Սալթանաթ խանի մի սիրաշարական արկածները. բայց թէ ինչպէս վերջացաւ, այդ պէտք է Բրօից հարցնել: Խոստովանում եմ, որ իսկոյն քնեցի և կեանքումս այնպէս քաղցր քնած չէի:

Առաւօտ վաղ Բրօն մեր էր կացել, մեն եկել և ճանապարհը դռել և վերադառնալով ինձ արթ-

նացրեց: «Պէտք է շտապել», ասաց նա, ամպերը Մասիսներից ցած են իջնում: Ցուրտը թմրեցրել էր ինձ. իսկոյն շիշում մնացած օղիի կէսը յիշեցի, և մնացածը տուի Բրօյին, իսկ դատարկ շիշը յանձնեցի քարաժայռի պահպանութեան: Երեք ժամ ճանապարհորդելից յետոյ մենք գտնվում էինք բոլորովին ապաշովութեան մէջ, այսինքն Բրօյի ծանօթի տանը ու եղ ու ձու էինք ուտում: Յաւում եմ շատ, որ այդ անհուն յիշատակարանաց և հնութեանց մէջ մտնելով և դուրս գալով, կարող եմ միայն այս հատարակ դիպուածը պատմել. միևնոյն է թէ մէկը մտնի մի ամենաշարուստ մուզէումի մէջ և դեռ որոշ ոչինչ չը տեսած, նորա թեկից բռնեն և դուրս ձգեն: Բայց ես Բրօյին խօսք տուի այդ անյաջող ճանապարհորդութիւնը կրկնել մի այլ անգամ:

«Որ եղանակ աւելի յարմար է», հարցրի:

—«Գարուն»—պատասխանեց նա:

Յիշեալ գաւառների կեդրոն և մի միայն քաղաքը է Մագու, որ ընկնում է 62° ու 0′, 62° ու 15′, 39° ու 30′, 39° ու 15′ լայնութեան և երկայնութեան տակ, չորս հազար երեք հարիւր յիսուն երեք (4353) ոտնաչափ բարձրութեան վերայ: Մագու շինված է Փոքր Մասիսի հարաւակողմը, նորանից յիսուն վերստ հեռաւորութեան վերայ, Գալա-գաղի ստորոտում մի նեղ ձորի մէջ, որ ձգուած է արևմուտքից դէպի արևելք: Մօտ չորս հարիւր տուն

ժողովուրդ ունի, որոնցից հարիւրը հայեր են, մնացածը Աղրբէջանի թաթարներ են։ Նորա հողաշէն տները շինված են ձորի հարաւային զառիվայրի վերայ, փողոցները ծուռը—մուռ և չափազանց նեղ են։ Նորա բերդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի քանի պատեր իւրեանց ծածկոցներովը, որոնք շինուած են քաղաքի հիւսիսումը մի չոր հովանաւոր ժայռի տակ, որ պաշպանում է նորան ձիւնից և անձրևից և մեծ արձագանք է տալիս, այնպէս որ շների հաչիւնը սաստիկ աղմուկ է պատճառում քաղաքի մէջ։ Այդ ժայռի անկայուն գոգաւոր լայնութեան վերայ փորված ճանապարհի հետքեր կան։ Տեղ-տեղ էլ քար ու կիր շարուածքներ դեռ մնում են։ Ժայռի ձախակողմը մի այր կայ մօտ երկու հարիւր ոտնաչափ բարձր, ուր մեծ բազմութեամբ ապրում են գիշակեր թռչուններ։ Ակնատեսները պատմեցին, որ քանի տարի առաջ, թռչունները իրարու հետ կռուելիս մի գդակ և մի դաշոյն են վեր գցել այնտեղից։ Նորա տակին մի երկաթի մեխ է ցցված ժայռի մէջ։ Ժայռի աջ կողմը դիտակի օգնութեամբ նշմարեցի երեք խաչեր, որոնց տակին հայերէն տառեր էին երևում։ Սա մեր պատմութեան մէջ անուանվում է «Մակ Մագուայ»։ Ինչպէս երևում է քարայրի արտաքին մասը 1840 թ. սասանութիւնից քանդուել է։

Ամենահետաքրքրականը այս քաղաքի սառցարանն է, ուր սառոյցը ամառն են պատրաստում։

Քաղաքից երկու վերստ հեռու, դէպի արևելք, Մագու գէտի աջ ափին ինձ ցոյց տուին մի սարաժայռ, որ մաներ և մեծ ծակոտկէններով ծածկված էր։ Այդ ծակոտիներից ամենամեծը, որ հորիզոնական ուղղութեամբ ձգուած է ժայռի ծոցումը, ամառուայ ամենատաք եղանակում սառնամանիք է արտաշնչում։ Մագուեցիք նորա բացուածքի դէմ մի փոքրիկ լիճ են շինել, ուր լցնում են ջուրը Մագու գետից բարձրացրած առուակի միջնորդութեամբ և սառոյց են ստանում։ Այս սառնամանեաց աղբիւրի հակառակը Մագուից դէպի արևմուտ, դարձեալ նոյն գետի աջ ափին, երեք վերստ հեռաւորութեան վերայ, մի այլ տեղ կայ որ ձմեռուայ սաստիկ ցրտին տաքութիւն է արտաշնչում։ Դորան տեղացիք անուանում են «կրակնկոց»։ Կրակնկոցը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սարաժայռ, որ թերևս հրաբուխից, կամ երկրաշարժից պատառուել է ծայրէ 'ի ծայր և որից շոգի է բարձրանում, որը հեռուից շատ նման է վառարանի ծխին։ Մի երրորդը, որին բնակիչները «Խրդուզի ծակ» են անուանում, գտնվում է արևմտեան հիւսիսում, դէպի Մասիսները, մօտ տասն և հինգ վերստ հեռաւորութեան վերայ։ Դա մի բնական հոր է ժայռի մէջ հրաբխական ժայթքումից առաջացած։

«Կարելի է այս հորի մէջ իջնել», հարցրի առաջնորդիս։

—«Անկարելի է»—պատասխանեց նա—«այդտեղ իջնողը իսկոյն կ'խեղդվի:—

«Բայց ինչպէս գիտէք, որ այդտեղ իջնողը խեղդվում է»:

Ես զարմացայ, երբ իմացայ, որ ոչ միայն հայերը, այլ և թաթարները և քրդերը այդտեղ բնագիտական փորձեր են արել:—Նրանք կախ են տուել այդ ձորի մէջ, շուն, կատու, ճրագ: Ճրագը հանգել է, շունը կամ կատուն սատկած, կամ ուշագնաց դուրս են հանել:

«Ի՞նչի համար, ինչ պատճառաւ այդպիսի փորձեր եք արել» հարցրի ես:

Ուղղեցոյցս պատմեց իւրեանց մի ընդհանրացած աւանդութիւն, որ այդտեղ գանձերով լի է: «Հնում հայերը առ ուփախսի ժամանակին իւրեանց հարստութիւնը իջեցրել պահել են այստեղ», ասում էր առաջնորդս:

«Ձեր կարծիքով ինչ է պատճառը, որ այստեղ իջնողը խեղդվում է» կրկնեցի ես:

Թիլիսմ են արել», պատասխանեց ուղղեցոյցս: «Ով որ այդ թիլիսմը կարողանայ քակել, գանձերին կ'տիրանայ»:

Այս հրաբխական աշխարհներին պակաս չեն և ջերմուկները: Մագուայ, Աւաջուղի և Գարայ-նիի խանութեանց մէջ չորս ջերմուկներ կան: Առաջինը ընկնում է Մագուայ և Աւաջուղի մէջ Բաշքեանդի մօտ, դա զելտերեան ջրին շատ նման է, բայց

և մի ախորժ թթուաշ համ ունի. տաքութիւնը սաստիկ չէ, այնպէս որ նորա մէջ ապրում են ձկներ: Երկուքը գտնվում են Թայղաբարայ հովտումը. մէկը Զէյվայ, իսկ Միւսը Թղնուտ գիւղի մօտ: Սորանք ծծմբաջրեր են, որոնցից երևելի են Թղնուտայ ջրերը: Զորրորդը գտնվում է Մազուայ խառնութեան մէջ Շոթ գիւղի մօտ, որ բոլորովին տարբեր յատկութիւն ունի: Սորա աւազանը նման է մի քարեայ թոնիրի, որից բղխում է ջուրը բիւրեղից յատակ: Բայց այդ թափանցիկ ջուրը բլրից իջնելով և խառնվելով հողի հետ փրփրում և քարանում է: Այս բնագիտական երևոյթները թողնելով բնագէտների ուշադրութեանը, պէտք է մի թեթև հայեացք ձգել այդ աշխարհի աւերակների վերայ և վերջացնել գործի առաջին մասը:

Դժուար է խօսել մի աշխարհի պատմական մնացորդների վերայ, երբ նա ամեն կերպով աւերակ է. ճշմարիտ, որ Հայաստան անուն աշխարհը ոչ այլ ինչ է, բայց եթէ աւերակների մի անհեթեթ կոյտ, որ բիւր անգամ շինված և բիւր անգամ աւերված աւերակներ աւերակների վերայ բարձրանալով: Բայց ընդհանրապէս տեսնվում է, որ ամեն մի նշանաւոր փլատակի կողքին, դեռ կենում են նորա յաւիտենական պահապանները, որոնց ազգային սեպհականութիւնք են եղել դրանք ժամանակով: Վերին Հայաստանի ամենաշին կեդրոնը, որ իւր անման գեղեցկութեամբ արժանացել է թագա-

ուրաց հոմանոց, ամարանոց և զօրանոց դառնալ. ուր քրիստոնէութեան առաջին տարուց սկսած դեռ անմահ մնում են Թադէի և առաջին հայ քրիստոնեայ նահատակ կուսի Սանդուխտ արքայադստեր թափված արեան կաթիլների հետքերը, ուր հենգերորդ տարումը, այսինքն Քրիստոսի 451 թ. 60 հազար քրիստոնեայ հայերը, Վարդան սպարապետի առաջնորդութեամբ, ոգևորված հայոց նոր կրօնքով, պատերազմեցին հայոց հին կրօնքի դէմ: Այդ սրբավայրումը, ինչպէս նաև Ամաչուղումը և Գարայեխումը, այսօր ոչ մի հայ չի ապրում: Ցիշեալ խանութեանց մէջ, նոյնպէս Աւարայր գաւառի արևելեան գիւղերում, ինչպէս Գարաղիսդին, Զորս, Բասամ և այլն մնացած են միայն ահագին աւերակներ և ընդարձակ գերեզմանատներ:

Այս հայերից թափուր վայրերը պատելիս, ճանապարհորդը հանդիպում է միայն նոցա յիշատակաց ուրվականին: Այստեղ մտաբերվում են Նահապետի և Գամառ-Քաթիպայի լուսնակի երգերը:

Երբ ես մտնեցել էի Սանդուխտ կուսի մատուռին, որ Թադէի վանքից երկու վերստ դէպի հարաւ հեռաւորութեան վերայ է գտնվում, յիշեցի նոյնպէս Հ. Ալիշանի «Ողբանք հայոց նոր Շուշանեաց», նոյն ժամանակ մտադիր եղայ յայտնել մեր մեծ. բանաստեղծին, որ Շաւարշան նոր շուշաններ որոնողը, նոր փշերի ու տատասկների կը հանդիպի, որովհետև այնտեղ այլ ես չեն ապրում հայոց կու-

սերը։ Սանդուխտ նահատակի շառաւիղները։

Ով որ ծանօթ է Եղիշէին և անցնում է Տղմուտ գետից, շրջում է Աւարայրի բոլորաձև դաշտի վերայ, որ իւր գետի ոլէս տղմուտ է, անկարող է չը յիշել, որ ինքը կանգնած է այն նշանաւոր պատերազմի դաշտի վերայ, ուր իւր նախնիքը մի վճռողական ճակատամարտ են տուել։ Այստեղ ճանապարհորդի առաջնորդը Եղիշէն է, նա պատկերացնում է հայկական վաշտերը, գունդերը, նոցա զօրավարները և զօրաշանդէսը, ճակատած Տղմուտ գետի ձախ ափին։ Բայց ինչպէս քիչ են դրանք, Պարսից բազմաթիւ փաղանքների դէմ։

Մեծ և փոքր Հայաստան տասն և ութ աշխարհներից կամ նահանգներից էր կազմված, բայց Վարդանանց պատերազմին մասնակցել են միայն ութ աշխարհները, այն էլ այդ ութ աշխարհներից չորսը Վասակի առաջնորդութեամբ հայոց հին կրօնի, այսինքն պարսից կողմն են բռնել։ Այդ ութ աշխարհները կարողացել են 120 հազար զինուորներ հանել պատերազմի դաշտի վերայ։ Այդ հաշուով տասն և ութ աշխարհները, եթէ միասին գործէին, մօտ երեք հարիւր հազարի մի բանակ կարող էին կանգնեցնել ռազմ։ Բայց ուր էին մնացել տասն մնացած աշխարհների բնակիչները։

Դա այնպիսի մի պատերազմ էր, որ չէր կարող նրաց չը հետաքրքրել։ Եթէ նոքա քրիստոնեայ էին, պատերազմը քրիստոնէութեան համար էր։ Եթէ

արեւապաշտ էին, պատերազմը արեւապաշտութեան համար էր, մի խօսքով պատերազմը կրօնական էր, սուրբ էր։ Եղիշէն այս հարցը բացատրում է նրանով, որ Վասակն էր քանդել այդ միաբանութիւնը*)։ Դարձեալ նաեւ յայտնւում է, որ հինգերորդ դարու հոգեւորականութիւնը, որի նման մենք չենք ունեցել բոլոր քրիստոնէական դարերումը, խիստ անելանելի ազդեցութիւն է ունեցել ազգաբնակութեան վերայ։ Այդ ապացուցւում է հետեւեալ պատմական փաստով։ Հայոց բոլոր այն ժամանակուայ հոգեւորականութիւնը, Կաթուղիկոսն, նշանաւոր եպիսկոպոսները և երեցները, բոլորը Վարդանանց կռիւն լինելով տասնեակները չեղոք են մնացել, շատը ներգործել են պարսից կողմից և հազիւ 60

*) Մանաւանդ. Եւ իրրեւ այս ամենայն չարիք յաջողեցան նոցա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանից՝ ոչ եւս յառաջ խաղալ և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ։ Գրեաց հրամարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոց սոսկութեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնէից՝ որ կան ի ծառայութեան Յունաց։ Եւ 'ի թշուառութեան ժամանակին այրն այն ապարատեսն էր առորին Հայոց և հաւատարիմ զրայն Հռոմայոց ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ զործովք իւրովք։ Եգեալ այս Վասակ զայն Վասակ իւր զործակից ի մեծամեծ չարիսն՝ յոր միաբանեցին երկոքեանն։

Եղիշէ էջ. 136.

հաղար հոգի, հոս նահանգներ կարողացել են միաբանուել բոլոր պարսկաստանի դէմ:

Ահա ինչ յիշատակութիւններ է արթնացնում Աւարայրի գաշարը:

Նորա վերայ եղած ճակատամարտը հաստատում է, որ հայերը ոչինչ միութեան կապ չեն ունեցել և ոչ կրօնն է կարողացել կապել այդ ընկերավարական սիրուց գրկված ցեղերով բաժանվածներին:

Ես յոյս կարել էի ժողովրդական աւանդութիւններից օգուտ քաղել. բայց հակառակ իմ յուսահատութեանը ես զարմանքով գտայ հայոց պատմական աւանդութիւնները թաթարների մէջ մնացած: Աւաջուղի Քիլիսաքեանդի բնակիչները իրանց գիւղի եկեղեցոյ շնութեան թուականը հաստատում էին 1500 տարուան, որի արևելեան և արևմտեան կամարները դեռ կանգուն մնում են: Ինձ ցոյց տուին Խարաբայ խաչի, Սադէլի, Խաչուի աւերակ եկեղեցիները և ընդարձակ գերեզմանատները:

Պէտք է յիշել որ Մագուայ, Աւաջուղի, Գարայնիի բոլոր թաթարաբնակ գիւղերումը եկեղեցիներ կան, բոլորն էլ աւերված: Լեռներում, գետերի ափերին կառուցած են վանքեր մատուռներ: Իսկ խաչարձաններ, խաչեր այնքան բազմաթիւ են, որոնք թէև թաթարները անշնորհացնելու մտաք խորտակում, փշրում են, բայց մինչև յաւիտեան էլ եթէ շարունակէին, հայոց քրիստոնէական կենդ

այդ աշխարհի վրայից չէին կարող եղծել:

Թաթարները, քրդերը խաչարձանների պատուանդանը փորում են նաև գանձ գտնելու յուսով: Նոցա այդ սովորութիւնն եմ պարտական մի պատմական առանդութիւն գիւտը: Խարբայ խաչի և Զեյթայ գիւղերի արանքը, Ցաճկա-պարտակական տրբանապօրանի ճանապարհի վէրայ, Կուսանաց գետի աջ ափին մի տեսակ առանձնացած ժայռ է ցցված: Թաթար առաջնորդս ցոյց տուեց ինձ նորա վերայ փորված, երկու իրար հաղորդած թզաչափ խաչեր, որոնք հնութիւնից հաղիւ նշմարվում էին. նրա կողքին դուռն կամրջակի նման մի նշան էր փորված, որի աջ վերջաւորութիւնը թեքված էր հորիզոնաբար: Նորա տակին թաթարները փորել էին հինգ կանգնաչափ: Փորուածքումը նկատվում էր ածուխ և ամանեղէնների կտորները: «Ի՞նչ կա այստեղ», հարցրի թաթար առաջնորդիս:—«Այս քարի տակին մի մեծ քարայր կայ, որի մէջ պահուած է մի ամբողջ քաղաքի հարստութիւն», պատասխանեց նա:

«Բայց քեզ ինչից է յայտնի», կրկնեցի ես:

—«Աւանդութեամբ պատմում են»—շարունակեց առաջնորդս—«որ հին ժամանակում հայոց թագաւորը, այստեղ, նա ցոյց տուեց Կուսանանց գետի ձախ ափը, մի քաղաք է շինել, յատկապէս քաջ տղամարդոց համար, բայց հայոց թոռունները (ազնուականները), նախանձելով նորա մեծա-

նայու վերայ, միաբանվել են և յանկարծակի պաշարելով քանդել են քաղաքը և բնակիչներին կոտորել։ Պաշարումից քանի օր առաջ քաղաքացիք, իմանալով խրանց գլխի գալիքը, բոլոր իրենց հարստութիւնը այս քարի տակի արի մէջ պահել են։

Նա ձիու գլուխը շուռ տուի, անցայ գետակը, բարձրացայ մի հրաբխային տափարակ սալարսի վերայ, որը հրմանդանի պէս ընկել էր Կուսանաց գետի և նրա ձախակողմեան լեռների մէջ. և իմ առաջս բացուեց մի ընդարձակ քաղաքի աւերակներ։

Աչա մի պատմական աւանդութիւն, որ մեզ ծանօթացնում է Արշակ Բ շինած Արշակաւանի հետ։ *)

Արշակաւանից մինչև Թադէի վանքը ուղիղ գծով երկու ժամվայ ճանապարհ է, բայց պտուտ տալով Գարայ-նիի միջով վեց ժամ է տևում։ Թադէի վանքից մինչև Մագու տևում է 7 ժամ։

Թադէի վանքի հարաւակողմը Շաւարշանի փոր-

---

*) Ծանօթ. Շատերը Արշակաւանի տեղը Մեծ Մասիսի հիւսիս-արևմտքում են դնում, Բայազիդի և Իգդիրի մէջ Կոնտարաանդների ճանապարհի վերա, ուր Խարաբայ-շահար անուանում աւերակներ կան։ Խորենացին անորոշ կերպով «Ի թիկանդ կուսէ լերինն Մասեայ շինեաց ձեռակերտ» ասում է, բայց որ կողմ ասէր է համարել Մասեայ թիկունքը։ Աւելի հաւանական է կարծել, որ թիկունքի աւանդութիւնը ստոյգ լինի։ Խորենացին Արշա-

բիկ արձակվայրի եզերքումը հինգ վերստ հեռաւորութեան վերայ բարձրանում է Սանատրուկ լեռը կամ բերդը: Այս բերդը մի եզական դիրք ունի. արևմուտքից արևելք ձգված մօտ ութ հարիւր ոտնաչափ երկայնութեամբ և տասն ութ ոտնաչափ լայնութեամբ երկու զուգահեռական ժայռեր են, որոնք պատում են հիւսիսից և հարաւից: Հարաւի կողմից տեղ-տեղ պակասում է բնական ժայռապատի շարունակութիւնը, այդ տեղ էլ տիտանական մեծութեամբ քարեր իրար վերայ շարած մինչև այժմ մնում են: Նորան կարելի է մատչել միայն արևմուտքից: Սորա հարաւային ստորոտում ձորամիջին տիրված են Շաւարշանի աւերակները:

Այս աշխարհում ճանապարհորդողը, կարծես, մի հոգևոր տիրապետութեան մնացորդների վերայ է շրջում: Ցարդ մնում են Մագու գետի վերայ, տաշած քարերով կամարակապ չորս կամուրջներ, որոնք հայ եպիսկոպոսներն են շինել: Ճանապարհները, որոնց մէջ նշանաւոր է Կապի ճանապարհը,

---

կաւանի պատմութեան մէջ առաջ գնալով ասում է: «Եւ նոյն ժամայն ծովացեալ լցեալ մարդկութեամբ հոմիսն ամենայն. քանզի աւանդաւուք և պարտականք ծառայք և մեսակարք և գողք և սպանողք և կնաշանք և այլք այսպիսի փախուցեալք անդր անկանէին և ոչ կար նոցա այլ և խնդիր»:

Շատ հաւանական է Խորենացու յիշած հոմիսը Թայզարարայ հոմիսը համարել, որ բնակութեան մեծ յարմարութիւն ունի:

ուր Թուանքչի լեռան շինությունը պատահելով, նորա միջով ճանապարհ է բացել Զաքարեայ եպիսկոպոսը: Այս պատմությունները ես ընդօրինակել եմ կամրջների և Կապի արձանագրություններից, որոնք գրված են հայոց 967—978 թուականներին:

Միևնոյն թուականին այսինքն 967-ին է պատկանում և Թաղէի վանուց հին նորոգությունը և շատ գերեզմանաքարերի թուականը: Ի վերայ այսր ամենայնի, այս աշխարհքն անուանում են Հշարդերան, որ նշանակում է չորս եկեղեցեաց կառուցություն: Թախարների պատմածի համեմատ այդ եկեղեցիքը եղել են Դիադիանայ տուրք Ցուիշանեվանքը, Քիլիսաբեանդի վանքը, Զանգի-մերայ Ապարաղնայ վանքը և Թաղէի վանքը:

Այս բոլոր աւերակների մէջ միայն կանգուն է մնացել տաճն և վեց-տարեայ մի քրիստոնէական յիշատակարան, Թաղէի վանքը, ուր լինել վարդապետում են Լուսաւորիչ Գրիգորի յուշքը: Այս արքեպեան տաճարում այժմ էլ կարդանում է մի հայ հոգևորական կանգնել, հաղար երեսուն և վեց նահատակների հոգեհանգստեանը փառաբանելու և դատաճաններին ողորմեցի ասելու համար: Հակառակ եկեղեցւոյ ներողամտութեան, ժողովուրդը սուկալի յիշողութեան տակ է դրել նոցա յիշատակը «Աստուածը», ասում է ժողովուրդը, «սև կարիճ չէ տեղծել. այդ գլուխի մաշացու միջատները դատաճանների, ազգուրացների գերեզմաններից»

են գոյացել»: Իշարկէ մենք չենք հաւատալ դորա իսկութեանը, բայց հիանում ենք այդ ժողովրդական յիշատակարանի վսեմ բարոյականի վերայ: «Դաւանանները մեռան» աւելացնում են նոքա, «բայց մեզ ժառանգութիւն թողին իւրեանցից գոյացած կարիճները, որոնք մեզ միշտ խոցոտել, մահացրել են»: Արդարև այդ միջատները գտնվում են յաճախ աւերակների մէջ, որոնք մատնութեան և դաւաճանութեան արգասիքն են եղել:

Թադէի վանքը ընկնում է Աւարայրի դաշտի հիւսիսարևմտքումը, նորանից 7 ժամ հեռաւորութեան վերայ, Շաւարշանի փոքրիկ տարածութեան հիւսիսային ծայրի ձորաբերանումն է շինված: Նորա արևելեան պարսպի տակից հոսում է Մագու գետի մի օժանդակ վտակը: Վանքի տաճարի շինութիւնը նորոգված է հայոց 978 թ. Զաքարեայ եպիսկոպոսի առաջնորդութեան օրերովը, որի նախկին թուականը անյայտ է մնում: Ամենապատուականն և մեծածախս հէնքը գաւիթն է, որ հայոց 1267 թ. է կրում: Շինուածքի պատերի շուրջը երեք կարգ զանազան արքոց արձաններ են քանդակած. աւելի արհեստական ճաշակով քանդակված են շէնքը շրջապատող վերին և ներքին ծաղկենկար ժապաւէնները: Այդպիսի հրաշափառ շէնք հազիւ թէ քանի հարիւր հազարներով գլուխ եկած լինէր: Բայց այն անձինք, որոնք շարժել են ժողովրդի ջերմեռանդութիւնը, այդպիսի մի աշագին գոհա-

բերութեան համար, միևնոյն անձինք դաւանանել են ժողովրդի ապագային, խախտել են նրանց հաստատամտութիւնը աւետեաց աշխարհի խաբուսիկ յոյսերով, աւերել են այդ կեդրոնական բնակատեղին և նորա բնակիչներին գլորել են գաղթականութեան կոբստաբեր թշուառութիւնների մէջ։

Այդ դժբախտ շարժումը այնքան արագ և ստիպողական է եղել, որ վանքի ծածկի արտաքին մասը և զանգակատունը թերակատար թողնելով, այդ անբախտ տարագիրները չեռացել են իւրեանց հայրական, պապական կրակարաններից։

«Երբ կոյրին առաջնորդում է կոյրը, երկուքն էլ խորխորատ կ'ընկնեն»։ Սա աւետարանական ճշմարտութիւն է։